ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 66-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2019 թվականի հունիսի 18-ի N 162 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի մարտի 25-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակները ու սակագները հաստատելու մասին»* N 66-Ա որոշման N 9 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 6-րդ գլխի 5-րդ բաժնի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. ականջի լվացում (յուրաքանչյուր ականջ) 3000 դրամ»,

2) 6-րդ գլխի 8-րդ բաժնի 8-րդ կետից հետո լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«9. Ներհոդային դեղորայքային ներարկում 30 000 դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի հունիսի 19
ք. Հրազդան
N 127-Ա